ՆՈՐ-ԴԱՐ

№ 104 ՏԱՍՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հաբաթ, 23 Յունիսի **1901** Հաբաթ, 23 Յունիսի ՏԱՍՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 104

Տարեկան 10 ռուբլի, վեց ամիսը՝ 6 ռուբլի, երեք ամիսը 3 ր.50 կ., ամիսը՝ 1 ր., համարը 5 կ.։ Բաժանորդ են գրւում Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ" կամ Tiflis, Rédaction ,,Nor-Dar''

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին 2 կ., ռեկլամների համար կրկնապատիկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

Առաջնորդող.—Առաջ և այժմս, հայերը և դրանց որդիքը։
Քրոնիկոն.—Լուրեր։
Մեզ գրում են.—Թաւրիզից Սալմաստից։ Վաչիանից։ Երևանից։ Զամզուրաջից։ Շուշուց։ Չրլորից։ Մեծլիսից։
Կ. Պոլսի հայ թերթերից։
Նամակ խմբագրութեան։
Մեր Կործակալների մասին։
Թղթակցութիւններ. — Նամակ Պարսկաստանից, Թաւրիզ։
Քաղաքական.—Թիւքեր։ Անգլիա։
Հեռագրական լուրեր։
Բանասիրական. — Ընթերցողի նկատողութիւնները։
Տեղեկատու։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 22 յունիսի 1901 թ.

ԱՌԱՋ ԵՒ ԱՅԺՄՍ, ՀԱՅԵՐԸ ԵՒ ԴՐԱՆՑ ՈՐԴԻՔԸ

—

Անիշխանութեան ու ասիական, այլ և պարսկական իշխանութեան, այսինքն կամայականութեան տակ ապրող և իրենց գոյութիւնը մի կերպ պահպանող ժողովուրդներն իրենց էս կարևոր հաստատութիւններով սովոր չեն կարգապահութեան. ընդհանրապէս ասիական երկրներում, ասիական ժողովուրդների հաստատութեանց մէջ միշտ կաղում է։

Այդ հանգամանքով պէտք է և բացատրել ասիական ժողովուրդների մէջ տիրող խառնաշփոթը և նրանց հաստատութիւնների անկայունութիւնը և, համեմատաբար, դրանց տուած չնչին արդիւնքը։

Հայոց հաստատութիւններն էլ, իբրև ասիական ժողովրդի հաստատութիւններ, միևնոյն բաղդին են ենթարկուած եղել և հայոց եկեղեցին իւր հոգևորականութիւնով երբէք չի կարողացել պարծենալ իւր կարգապահութեամբ, խստութեամբ, որ միակ գրաւականն է նրա հաստատութեան և առաջադիմութեան։

Ասիական կարգով ու բարքով և իշխանութեան տակ սնուած ու կրթուած մեծաւորը չի սիրում կարգապահութիւն, այդ բանին նա սովոր չէ, չի կարողանում նրան ընտելանալ. նոյնն է և նրա ստորադրեալը, որ իւր փոքրիկ տեղով սիրում է բռնակալի դեր խաղալ աւելի փոքրիկ ստորադրեալի վերաբերութեամբ և դէպի իւր մեծաւորը կարողանում է ամբոխութեամբ վերաբերուել։

Խիստ և ցանկալի կարգադրութիւնը մեր հոգևորականութեան, մեր եկեղեցու մէջ մեզ համար անհասանելի իդէալ մնալով, հոգու խորքից վրդովուած պէտք է խոստովանենք, որ երբէք կարգապահութիւնն այն աստիճանի չէ ընկել մեր հոգևոր հերարխիայի մէջ՝ ինչպէս այժմս, երբէք ըմբոստութիւնը, յանդգնութիւնը չէ կարողացել անպատիժ իւր գլուխը բարձրացնել՝ ինչպէս այդ տեսնում ենք մեր օրերին։

Հոգևորականներն էլ մարդիկ են, նրանք էլ կարող են պատճառ ունենալ մրմեանց հետ վիճելու, միմեանցից և կամ իրենց մեծաւորներից գանգատուելու, —բայց ամեն բանին չափ և սահման պէտք է լինի։

Հոգևորականները, կուսակրօն հոգևորականութիւնը — հոգևոր գինուորութիւն է։

Արդ, լաւ կը, կարելի բան է, որ մի որևէ կապիտան, այսինչ վաշտի հրամանատար, թոյլ տայ իրեն հրապարակով գրելու, մեղադրելու, յարձակուելու և ծաղրելու մի գնդի գնդապետին՝ զօրապետից հրաման չստացած, կամ յարձակուելու և քննադատելու զօրքի առաջ իւր զօրավարի կատարած — թէկուզ ճշմարիտ վատ - գործերը։

Այդպիսի բան չի լինիլ, եթէ լինի յանդգնողը, իբրև կրկրկուր ընդմիշտ իւր բոլոր շնորհից և յաւրոսան կզրկուի։

Ի՞նչ ենք տեսնում մեր հոգևոր զինուորութեան մէջ։

Հասարակ, երեկուայ պաշտօնեան հրապարակով հայհոյում, վատաբանում է անքաղաքավարի լեզուով իրենից բարձր պաշտօնեայրն, բարձր պաշտօնեան յարձակւում է իւր Մօր վրայ, նրա «թերութիւնները» հրապարակ է հանում, նրան խարաւում է։

Եւ իմացած լինենք, որ դրանք ոչ թէ չեն պատժուիլ, այլ դեռ կըվարձատրուեն։

Եւ մենք ուզում ենք, մենք մտածում ենք բարեկարգել մեր հաստատութիւնները...

Մի ժամանակ ս. Էջմիածնի միաբանութիւնը, կամ աւելի ճիշտը, միաբանութեան անդամների մեծամասնութիւնը իւր խուժը և յայտնի ներկայացուցիչներով շատ նեղացել էր հանգուցեալ Մատթէոս Կաթողիկոսի կառավարելու հանգից և Կաթողիկոսը դէմ բողոքով դիմել էր Թիֆլիսը հայոց համայնքի առաջաւորներին։

Բողոքող եպիսկոպոսներն սպասում էին, որ իրենց բողոքը մեծ բարբանգում կըձգէ Թիֆլիսի հայոց մէջ և ամենայն հայոց Կաթողիկոսին կըքննադատէ ս. Էջմիածնի միաբանութեան առաջ։

Թիֆլիսում մեր հայերը, չուխա և կապա հագած հայերը, Հայաստանեայց եկեղեցու Պետի դէմ ուղղուած այդ գանգատներով ձանաչեցին բողոքող սրբազանների հոգին ու միտքը և մարդիկ ուղարկեցին սուրբ Էջմիածին եպիսկոպոսներին կարգի և հնազանդութեան հրաւիրելու. Կաթողիկոսը մեր Հայրն է, մեր եկեղեցու Պետն է, Լուսաւորչի Աթոռի Ժառանգը. դուք իրաւունք չունիք Նրա գործերը քննադատելու և նրա դէմ բողոք գրելու. դուք անպայման պիտի հնազանդէք Վեհին, այլապէս ձեզ չենք ճանաչում և այլն և այլն։

Եւ ամենքն էլ խոնարհեցին։ Այդ առաջ էր, երբ մեր հայրերն էին ապրում... խաւար ժամանակներում։

Երեկուայ ողորմելի տիրացուն գիւղական անգործ ուսուցիչը, վանքի գաւթում երկարամեայ ծառայութեան համար հոգևորական սրոշ աստիճանի բարձրացած հոգևորականը հրապարակով յարձակւում են իրենց մեծաւորի դէմ և նրա արարքը քննադատում այնպէս՝ ինչպէս իրենց է հաճելի, խրատում, դատափետում են, և մեր լուսաւոր ժամանակի որդիքը ոչ թէ չեն վրդովւում այդ ամենը տեսնելով, ոչ թէ դուռը չեն ցոյց տալիս այդ պատահական հոգևորականներին, այլ դեռ քաջալերում, ծափ են տալիս դրանց...

Էլ ինչ ասենք։

Յուլիսի 1-ից «Նոր-Դար»-ին բաժանորդ են գրւում եւ վճարում են 6 ռուբլի։

ՔՐՈՆԻԿՈՆ

—

Կովկասեան ցուցահանդէսի կազմակերպիչ գլխաւոր մասնաժողովը իւր յունիսի 20 ի նիստին որոշեց՝ խնդրել Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեւիչին իւր Օգոստափառ հովանաւորութեան տակ առնելու։ Եղ սմին որոշեց իբրև պատուաւոր հիւրերի հրաւիրել երկրագործութեան մինիստր Ա. Ս. Երմոլովին, Նրա օգնական հոֆմայստեր Ստեննին, ֆինանսների մինիստր Վիտտէին և նրա օգնական Վ. Ի. Կովալեւսկուն։

— Կովկասեան ցուցահանդէսը ելեկտրականութեամբ լուսաւորելու գործը յանձնուած է Ռոբերտ Երիկսոնի փիրմայի ներկայացուցիչ ինժեներ Ռագոլեւ...

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԸՆԹԵՐՑՈՂԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

—

(Վերջ *)

Գ. Լէօն անխնայ հալածում է հ. Մելիանին նրա մի առաջարկութեան համար —առաջնորդները ժողովրդի ձեռքով ընտրուեն։ Նա բաւականին ընդարձակ է խօսում է այդ առաջարկութեան մասին և ցոյց տալիս, որ դա անիրագործելի է, որովհետև հայոց եկեղեցին Ռուսիայու կառավարւում է պետական որոշ օրենքով, որ չէ սահմանել առաջնորդական ընտրութիւն։ Ցարգելի պարոնը հարց է առաջարկում. «Ի՞նչպէս էք լրացնում օրէնքի այդ պակասը» և ինքն էլ պատասխանում է. «Ձեր անձնական կարծիքով,—բայց դա ողորմելի միջոց է»...

Երեք տարի առաջ կեղծ ազատամիտների բանակը նոյնպէս զբաղուած էր քահանայական հարցով, ջուր ծեծելով. Իւրաքանչիւր կեղծ ազատամիտ հարկ համարեց իւր խելքի ու մտքի քննաէսսէնցիան հրապարակ հանել, որից գոյացաւ մի գարշելի փխածք։ Այդ դեռ քիչ էր, Լ. Սարգսեանի հետևողներն առաջ բերին և իրենց նշանաւոր «ամբողջ էութիւնը», ասես թէ խօսողը մի Գլադստոն, Բիսմարկ, Տոլստոյ կամ Զոլա լինի և ոչ թէ մեր ժամանակի մի նոր Խիկար։ Գ.Ա. Ահարոնեանն էլ չկամեցաւ յետ մնալ և ուղարկեց իւր «Ձայն գաւառից» յօդուածը, ուր «Մշակ», 1898 թ. № 54) ի միջի այլոց զօռ է տալիս խելքին, ասելով. «Ո՛չ, պարոններ, խօսեցէք որքան կամենում էք կուսակրօնութիւն չընդունելու մասին, բայց երբէք աւելորդ մի համարէք ինտելիգենտ մարդու քահանայութիւնը։ Երանի՜ թէ հնար լինէր ամեն մի գիւղում մի մի արժանաւոր քահանայ դնել. այն ժամանակ մենք առիթ չէինք ունենալ այսքան շատ զբաղուել մեր վարդապետներով, որովհետև առանց դրանց էլ կարելի կըլինէր այն ժամանակ շատ լաւ ապրել»։ Այս տողերից պարզ երևում է, որ այդ պ. Ահարոնեանն առաջարկում է կուսակրօնութիւն չընդունել, որովհետև առանց վարդապետների էլ կարելի է շատ լաւ ապրել, և եթէ համեմատելու լինենք հ. Մելեանի և պ. Ահարոնեանի առաջարկութիւնները, կըտեսնենք, որ հ. Մելեանինն աւելի խելքի մօտ է, քան թէ Ահարոնեանինը։ Սրդեօք կեղծ ազատամիտների բերան թերթը հարկ համարեց այն ժամանակ հարց առաջարկելու իրեն, թէ ինչ միտք ունի յարուցանել այնպիսի հարցեր, որ չենք կարող իրագործել։ Չէ՞ որ նոյն պոլոժենիէն, որ գոյութիւն ունի հ. Մելեանի առաջնորդական ընտրութիւնների հարցի համար, գոյութիւն ունէր և կուսակրօնութիւն չընդունելու համար։ Ինչո՞ւ այն ժամանակ չէիք պայքանում և զարհուրում մի այդպիսի խոշոր անհեթեթութիւնից։ Ներելի լինի հարցնել. «Ի՞նչպէս էիք վերացնում այդ օրէնքը.—Ձեր անձնական կարծիքով.—բայց չէ՞ որ դա աւելի քան ողորմելի է»... Ինչո՞ւ պ. Ահարոնեանի տողերը «սխուր լաչ» չեն կարող դառնալ գրողի համար, իսկ հ. Մելեանինը—կարող են։ Ինչո՞ւ այս տարուայ եպիսկոպոսական ձեռնադրութեան առթիւ ձեր լրագրի գրածը, թէ սինոդից հրաման չէ ստացուել, աւելի քան սխուր լաչ չէ կարող լինել այդ թերթի համար, քան թէ հ. Մելեանի առաջարկութիւնը։ Հայ հասարակութիւնը մի օր կըհասկանայ իրեն ազատամիտ անուանող թերթի սխուր դերը, բայց ուշ...։ Պատմութեան անողոք դատաստանից խոյս տալ չի լինիլ։

Ամենից աւելի թափ է տալիս հ. Մելեանին և նրա համար, որ «կամենալով խայթել Արիստակէս եպիսկոպոսին, անուանում է նրան Դրեպերի թարգմանիչ», և գերապատիւ սրբազանի փաստաբանն աւելացնում է, «Բայց նշանակո՞ւմ է դա, թէ Դրեպերը հեղինութեան առարկայ պիտի լինի Բաթումի քահանայի համար»։ Ի հարկէ, ոչ,—կը պատասխանէ մեզանից իւրաքանչիւրը և կաւելացնէ՝ —խեղճ Դրեպեր, եթէ պաշտպանդ մեր սոփեստ Լէօն է։ Մի՞թէ չէք հասկանում, որ եզնողները Դրեպերին չեն հեգնում, այլ անպայման թերուս թարգմանչին և այն էլ ամենաարժանի կերպով։ Այդ թարգմանութեան կոմիքական կողմն այն է, որ մի «սրատաշւ» հոգևորական, տասնեակ տարիներ առաջ կամենալով մի ծառայութիւն անել իւր ազգին, չէ հասկացել իւր ժողովրդի պահանջը, նրա մտաւոր զարգացման աստիճանը և պատրաստականութիւնը և առել է թարգմանել Դրեպերի «Եւրոպայի քաղաքակրթութեան պատմութիւնը»։ Եթէ 60-ական թուականներում «Հիւսիսափայլ»ի և «Կռունկ»ի մէջ պատահում էին համանման նիւթեր, նրանք լինում էին ի չարս ուրիշ մատչելի յօդուածների։ Եւ Դրեպերի ազգեցութեան պէտք է վերագրել այն հանգամանքը, որ մինչև օրս էլ Արիստակէս եպիսկոպոսը մի այնպիսի հաղուագիւտ և բացառիկ հոգևորական է մեր մէջ, որ ոչ ինքն է կարողանում ժողովրդին հասկանալ, ոչ էլ ժողովուրդը նրան, բացի մի քանի թունդ փոշի բարձրացնողներից, որոնք ոչ միայն Եւրոպայի, այլ և Ամերիկայի, Ասիայի, Աֆրիկայի և Աւստրալիայի քաղաքակրթութեան պատմութիւններն են ուսումնասիրել և ոչինչ չեն ուսումնասիրել։

Ինչպէս երևում է պ. Լէօյի քննադատութիւնից, հ. Մելեանը իւր քննադատութեան ժամանակ աչքի առաջ է ունեցել Արիստակէս եպիսկոպոսի ոչ միայն յայտարարութիւնը, այլ և ուղղակի ասում է, «թէ Արիստակէս եպիսկոպոսը ոչինչ չէ արել, որ նա էլ պակասութիւններ շատ ունի»։ Նոյնն է ասել և «Արարատ»-ը։ Այս էական մեղադրանքը փոխանակ փարատելու, Լէօն դարձեալ դիմում է նոյն յայտարարութեան մի երկու-երեք կէտերին և հայհոյում Մելեան քահանային։ Գ. Լէօն լաւ պիտի իմանայ, որ ամեն մի «դիւանատան մուկ» կարող է ոչ մի, այլ քսան և մի այդպիսի յայտարարութիւն գրել,—դա գործ չէ. իսկ հակառակորդներին լռեցնելու համար պէտք է գործ ցոյց տալ, փաստեր առաջ բերել, և նա այս դէպքում պերճօրէն լռութիւն է պահպանում։ Անաչառ լինելու համար մենք կօգնենք պ. Լէօյին և գործերից, Արիստակէս եպիսկոպոսի գործերից կը խօսենք։ Մեզ էլ այս դէպքում օգնում է գերապատիւ սրբազանը, տալով մեր ձեռքը բանալի։ Այդ բանալին այն նամակն է, որ տպուած է իրեն գովող թերթի 127րդ համարում։ Անհաւասիկ գերապատիւ սրբազանի կատարած գործը։

1896 թ. Նորին Վեհափառութեան հրամանով Արիստակէս սրբազանն ուղևորւում է Ս. Պետերբուրգ պաշտօնական անձանց հետ բանակցութիւն սկսելու «մի կարևոր խնդրի» առիթով։ Այդ կարևոր խնդիրը, ինչպէս յայտնի է ամենքին, հայոց եկեղեցական-ծխական ուսումնարանների խնդիրն էր։ Սրբազան հայրը իւր խօսածներն ու լսածները հաղորդում է Նորին Սրբութեանը, բայց «Արարատ»ի խմբագրութիւնը զեկուցման մի կտորը բարեհաճել էր հրատարակել առանց Սեդրակեան եպիսկոպոսի հաւանութեան, ուստի և սա, նկատելով մի

*) Տես «Նոր-Դար» № 103.

րին 4,700 րուբլով մինչև հոկտեմբերի 20-ը, այնուհետև իւրաքանչիւր աւելոր գիշերուայ լուսաւորութեան համար պիտի վճարուի 40 ր.: Ցուցահանդէսը պիտի լուսաւորուի մինչև գիշերուայ ժամը 2 ը:

— Որոշուած է կովկասեան ցուցահանդէսում Թատերական Ներկայացումներ տալ 100 րուբլանոց փայերից գոյացած մասնաւոր միջոցներով: Փայատէրերը յետ կըստանան իրենց գումարները ներկայացումների մուտքի և աթոռների տոմսակներից գոյացած եկամուտներից: Ներկայացումների բնաւորութիւնը որոշելու համար նիստ է նշանակուած յունիսի 24 ին:

— Երկրագործութեան և պետական կալուածների մինիստրութեան կից մի առանձին յանձնաժողով է նշանակուած պարզելու համար Անդրկովկասի արքունական ձկնորսարանների վերջին աճուրդների անաջողութեան պատճառները:

— Մայրաքաղաքի թերթերի ասելով, Պետերբուրգ են հասել պարսիկ վաճառականներ Կասպից ծովի համար առևտրական հինգ նաւ գնելու նպատակով:

— Ինչպէս յայտնի է, Ռուսիայի միջնակարգ և բարձրագոյն դպրոցներում սահմանափակուած է հրէաների ընդունելութիւնը: Այժմ, երբ վերակազմւում են այդ դպրոցները, Ռուսիայում ապրող հրէաների մէջ լուսաւորութիւն տարածող ընկերութեան Օդեսայի ճիւղը, լրագրների ասելով, որոշել է խնդրամատոյց լինել լուսաւորութեան մինիստրին, որ հրէաների ընդունելութեան սահմանափակման կանոնները փոխուեն:

— Պետերբուրգում մի նոր ընկերութիւն է կազմւում ուսանող երիտասարդութեան էժանագին բնակարաններ մատակարարելու նպատակով:

—

ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

ԹԱՒՐԻԶԻՑ.— Սահակ եպ. Այվազեանը իր կողմնակի մի քանի պատգամաւորներով ընտրել էր Ատրպատականի առաջնորդ Մուրադեան վարդապետին: Պատգամաւորների մեծամասնութիւնը թէ հեռագրով և թէ խնդրագրով, Սուքիաս արքեպիսկոպոսի միջոցով, բողոքեց Վեհ. Հայրապետին այդ ապօրինի ընտրութեան դէմ, առաջը դնելով կատարուած կեղծիքները: Սակայն, ինչպէս երևում է, ս. Էջմիածնում ևս աշխատողներ կան Մուրադեան վարդապետի համար, այդ պատճառով պատգամաւորները նորից հեռագրով խնդրեցին Վեհին, որ հաճի չուղարկել Մուրադեան վարդապետին, իսկ վերջինս հեռագրով յայտնեցին, որ ինքն ընտրուած է ապօրինի կերպով: Պատգամաւորները որպէս առաջնորդացու ակնարկել են Նորընծայ Սաթունեան սրբազանի մասին:

—

ՍԱԼՄԱՍՏԻՑ.— Սալմաստեցի հայը մի ժամանակ գաղթում էր բողոքականներից, կաթոլիկներից, խաներից, բէկերից, սարփաքաստներից, մաւուրների ձեռքից, իսկ այժմ ստիպուած է գաղթել հայ ենիչէրիների ձեռքից: Սալմաստի հայ բնակչութիւնը վերջանալու վրայ է. արդեօք աւերակներին տիրութիւն անելու համար ս. Էջմիածինը մի վարդապետ կուղարկէ թէ ոչ:

—

ՎԱՂԻՐԱՆԻՑ.— Յունիսի 14-ի աղէտին Ախալքալաքից վրայ հասաւ գաւառապետի օգնական պ. Դ. Դուբանսկի իր մարդկանցով, նոյնպէս մի խումբ զինուորներ. բայց աղէտը իր բանը տեսել վերջացրել էր: Թշուառութիւնն աննկարագրելի է: Երկու հարիւրից աւելի տուն ունեցող Վաչիան գիւղում մարդ չի կարող տեսնել ոչ մի կանգուն շէնք. բոլոր շինութիւնները հեղեղը փչացրել է: Գիւղացու ունեցած բոլոր ինչքը՝ ալիւր, իւղ, պանիր, կահ-կարասիք, կապերտներ, անկողին, երկրագործական գործիքներ, չորեր... Ջրի հոսանքի հետ խառնուելով աւազի ու հողի հետ հաւասարուել քշուել կորել են: Սրտաճմլիկ է այն տեսարանը, որ գիւղացիք, զրկուած իրենց ամեն ինչից, խումբ-խումբ կուչ են եկել պատերի տակ և աղիողորմ լաց լինում: Յունիսի 15-ին, գաւառապետի կարգադրութեամբ, անբաղդացածներին ալիւր բաժանուեց, և հարկաւոր օգնութեան համար ժողովներ են կայանում:

—

ԵՐԵՒԱՆԻՑ.— Մեզնում այս տարի արտասովոր շոգեր են լինում. ամարանոց գնացողների թիւն օրէ ցօր աւելանում է. մի քանի օրից յետոյ քաղաքս համարեա կըդատարկուի, իսկ այդ նպաստում է առանց այն էլ տարածուած գողութեան աւելի լայն ծաւալ ստանալուն:

— Վաղարշապատի գաւառում այս տարի էլ յայտնուել է բորենին (մարդագայլը) և մի քանի գիւղերում մի քանի մարդկանց վնասել: Սա արդէն երրորդ տարին է, ինչ մարդակեր գազանը երևում է. և միշտ էլ այս ժամանակները: Բորենու երևալը կտրում է խեղճ գիւղացու գիշերային հանգստութիւնն ու քունը. Նա ստիպուած է ամբողջ գիշերը երկիւղով պատած անքուն անցկացնել: Գիւղերից արդէն խնդրամատոյց են եղել Վաղարշապատի գաւառապետին և այդ առթիւ միջոցներ են ձեռք առնուած:

—

ՉԱՄԴՈՒՐԻՑ գիւղից (Ախալքալաքի գաւառ).— Յունիսի 14—15 ին տեղացող յորդառատ անձրևը գիւղիս շատ տների պատերը փուլ բերեց. մարդկանց զոհեր չպատահեցին: Մեր գիւղի բոլոր տները կաթում են. գիւղացին պատսպարուելու մի չոր անկիւն չունի. գիշեր-ցերեկ անընդհատ անձրև է գալիս, արևի երես չենք տեսնում: Օրէ ցօր բազմանում են մեր դաշտերում հացահատիկները փչացնող հատուկենտ մլուկները. Մեր գաւառն աղէտների որջ է դարձել. գիւղացիք յուսահատ դրութեան մէջ են. Նրանք այս տարի ևս իրենց աշխատանքի պտուղը յանձնելու են հացի բզէզների ագահ որկորը: Գիւղումս յաճախակի օրերով քաղցած են մնում շատ ընտանիքներ:

—

ՇՈՒՇՈՒԻՑ.— Քաղաքիս բնակչութեան վաղուց ի վեր փափագած իղձերից մէկն իրականութիւն ստացաւ: Յունիսի 15-ից, պատշաճաւոր իշխանութեան թոյլտուութեամբ, բացուած է Մ. Ամանեանցի նորակառոյց եւրոպական շոգեբաղնիքը: Շքեղ բաղնիքն ունի առանձին ընդարձակ բաժանմունքներ տղամարդկանց և կանանց համար պատշաճավայել համարներով ու կահաւորուած է եւրոպական ձևով. բաղնիքի առաջին բաժանմունքը դեռ պատրաստ չէ: Սոյն բաղնիքի բացումով վերջապէս մինչև ունեցանք ազատուելու թուրք կապալառուների կամայականութեանց մատնուած, կեղտոտութեան մէջ ընկղմուած և սարսափելի վարակիչ հիւանդութիւնների բոյն դարձած բաղնիքներից:

—

ՉԸԼՏԻՐԻՑ — Չըլտըրը փոքրիկ գիւղակ է, որ գտնւում է Կարսի շրջանում և սահմանակից է Ախալքալաքին, ունի 40 գիւղ բնակիչ, բոլորը թրքախօս: Չըլտըրի ալեւորները թուրքերը յաճախակի սպանում են այդ գաւառակի միջով գնացող Կարս, Արդահան, Օլթի, Կաղզուան և այլ տեղեր անցնող ճանապարհորդներին, կողոպտելու նպատակով: Չնայած կառավարութեան կողմից ձեռք առնուած խիստ ու ազդու միջոցներին, այս օրերս կրկին արդ գաւառակի Ճալա կոչուած գիւղի մօտ սպանել են Ախալքալաքի Կորգալա գիւղի բնակիչ՝ հարուստ օջախի որդի Գալուստ Օզմիցեանին. Նոյնպէս գտնուած է երկու սպանուածների դիակ Գեօկղալ լեռան ստորոտում, քարակոյտերի մէջ թաղցրած: Մինչ օրս այդ դիակների ում լինելը յայտնի չէ: Հարկաւոր քննութիւններ են կատարւում և աշխատում են մարդասպաններին գտնել:

—

ՄԵԺԼԻՍ գիւղից (Նուխու գաւ.).— Յունիսի 2-ին, երեկոյեան ժամը 4 ին, այստեղ փոթորիկ սկսուեց և կարկտախառն անձրև եկաւ, որը երկու ժամ տևեց և գիւղիս արտերին բաւականին մեծ վնաս պատճառեց: Հետևեալ օրն առաւօտեան գիւղի տանուտէրը մի քանի անձերով այցելեց վնասուած արտերը: Կարկուտի տուած վնասը մօտաւորապէս հաշւում են 1,800 պուդ հացահատիկ: Այդ փոթորկից վնասել է նոյնպէս մեր գիւղին մօտիկ Սալբէկ գիւղը, բայց համեմատաբար մեր գիւղից աւելի թեթև կերպով: Անձրևը նոյն սաստկութեամբ եկել է նոյնպէս Ղօշլու գիւղում, ուր հեղեղին զոհ են գնացել մի տաւար և երկու կով:

Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅ ԹԵՐԹԵՐԻՑ

—

Որբանոցի արդի շէնքին տեղ, Գարաբէօզեան կտակի գումարով նոր շէնք մը պիտի կառուցուի, 2000 կանգուն տեղի վրայ և երկու յարկով, 200 որբ պարունակելու մեծութեամբ: Այս նպատակաւ անցեալ ուրբաթ օր ս. Յակոբայ որբանոցին տեղւոյն վրայ, ի ներկայութեան ս. պատրիարքին, ճարտարապետական քննութիւն մը կատարուեցաւ Գաբրիէլ էֆ. Սէրվիչէնի և Դէօրգ էֆէնտի Ասլանեանի կողմէ: Գարաբէօզեան որբանոցին յատակագիծն անձնուիրաբար պիտի պատրաստուի Սէրվիչէն և Ասլանեան էֆէնտիներու կողմէ:

— Պոլսոյ պապական նուիրակ ս. Բոնէթթի Նիկոմիդիա գացած ըլլալով, տեղւոյն առաջնորդ ս. Նաւզալեան եպիսկոպոս բարի գալուստի գացած էր ս. Բոնէթթիի, որ անցեալ շաբաթ փոխադարձ այցելութեան երթալով առաջնորդին մեծ պատուով ընդունուեր է եկեղեցիին դռնէն: Տ. Բոնէթթի եկեղեցի մտեր է դպրաց դասի հետ և սեղանին առջև պահ մը աղօթել յետոյ առաջնորդարան եկեր է: Տ. Բոնէթթիի ցոյց տուեր են թանգարանին մէջ գտնուած ձեռագիր կրօնական գրքերը: Խօսակցութեան գլխաւոր առարկայ եղեր է քրիստոնէական համերաշխութեան պէտքը: Տ. Բոնէթթի մեկնած պահուն առաջնորդին յայտներ է թէ բնաւ պիտի չմոռնայ իրեն եղած սիրալիր ընդունելութիւնը:

— Հաջինէն հասած տեղեկութիւններէ կիմացուի, որ տեղւոյն ս. Յակոբայ մենաստանին տաճարը՝ կիսովին փլեր է, տեղատարափ անձրևներու սաստկութենէն, և աւերակաց ներքև մնալով եկեղեցական սպասներ ու նուիրական անօթք՝ փճացեր են: Այս վանքին մէջ հաստատուած է նաև որբանոցը, և անոր նորոգութիւնն անհրաժեշտ է, այս մեծ հաստատութիւնը՝ իսպառ քայքայումէ փրկելու համար: Այսպիսի շինութեանց նպաստելու համար եկեղեցիներու մէջ պնակներու շրջաբերութիւն մը հաստատուեցաւ:

— Բ. Դրան լրագրութեան խորհրդական վսեմ. Գաբրիէլ էֆ. Նորատունկեան Պարիզի մէջ հրատարակած է երկու հատոր՝ բաղկացած աշխատասիրութիւն մը, որ սա խորագիրը կը կրէ. «Հաւաքածոյ օսմ. կայսրութեան միջազգային պաշտօնագիրներու»: Այս հատորին մէջ ամփոփուած են Թիւրքիոյ՝ օտար տէրութեանց հետ կնքած դաշնագրութիւններուն, պայմանագրութեանց և այլ պաշտօնագիրներու պատճէնները: Փրանսական հանդէս մը հաւաքածոյին դասակարգութեան վրայ խօսելէ յետոյ՝ կը գրուատէ վսեմ. Գաբրիէլ էֆ. Նորատունկեանի այդ հրատարակութիւնը, ըսելով թէ իր տեսակին մէջ բրական և գործնական արժէք ունեցող գործ մըն է անիկա:

— Եգիպտոսէն մինչև հիմա քանի մը տասնեակ հայեր Խարթում գացեր հաստատուեր են և զանազան մանր առևտուրներ կընեն Սուդանի բնիկներուն հետ: Աւելորդ է ըսել, թէ յոյնք և հրեայք արդէն կանխած էին հայերը նաև Սուդանի վաճառականութեան մէջ: Խարթում, զոր քանդելով Օմդուրման շինեցուցած էր Սուդանի [illegible] Էմիրը, նորէն իր առջի փայլը գտնելու վրայ է, շնորհիւ նոր վարչութեան:

այդպիսի վարմունք և ուղղութիւն, վերջապէս է վերադառնալ իր պաշտօնատեղին և «պապ»՝ նա յառաջ է բերում իր գրութիւնը Նորին Վեհափառութեան ուղղած «արքայաց»-ի վարմունքի առթիւ, որ և աւարտում է հետևեալ խօսքերով. «Ուստի եթէ ազգերալ զայլ չարժառիթս ոչ բնաւ պատշաճս բնաւորութեան, հանգամանաց և օգտի փափկագոյն խնդրոյն՝ մնաց լռել ձեռնամթափ լինել ի գործոյս և անապարել ի տեղի իւր»:

Բարեպաշտ սրբազանն այդ դէպքի մանրամասնութիւնները մոռացել է, ուստի աւելորդ չի լինիլ յիշեցնելը: Ասացէք, խնդրեմ, սրբազան հայր, առաջին անգամ ձեր զգուշացման մէջ չէի՞ք գրել, որ մտադիր էք հեռանալ մայրաքաղաքից: Չէ որ ձեզ հեռագրեցին սպասել Նորին Վեհափառութեան նոր կարգադրութեան: Ի՞նչ էր գրել ձեզ այդ մասին Նորին Օծութիւնը: Դուք ձեր ամեն մի տողը հրապարակ էք հանում, որպէս հանճարեղ մտքի մի արգասիք, բայց չէք ասում, թէ ինչպէս է գովել ձեր վարմունքը ձեր Պետը: Չէ որ Վեհափառի կոնդակից յետոյ էիք դուք գրել ձեր յանդուգն թուղթը, որ բերել էք ձեր փառաբանող թերթում: Եթէ պատմում էք, պատմեցէք ճշմարիտ կերպով, որ էֆ. Փէշտը լիակատար լինի, որպէս զի ձեզ ճանաչեն և հասկանան, թէ ինչ գործեր էք կատարել, մանաւանդ լաւ հասկանան ձեր երկրպագուները, երբ միայն նրանք հասկանալու ընդունակութիւնից զուրկ չեն: Դուք, որ «եկեղեցու կանոնական իրաւաբանական տեսակէտների նպատակաւ» լաւ յայտարարութիւններ գրել գիտէք, անշուշտ և գիտէք, որ ստորագրեալը հնազանդ պիտի լինի իր մեծին, իրաւունք չունի նրան խրատներ կարդալու և մանաւանդ իր պետին: Ոչ միայն իրաւունք չունէիք ձեր Պետին այդպիսի թուղթ գրելու, այլ և պարտական էիք մինչև գործի վախճանը մնալ Պետերբուրգ և ոչ թէ ինքնակամ հեռանալ: Ձեր նամակը պարզ ցոյց է տալիս, որ դուք ոչ միայն անհնազանդ, այլ և ոչինչ մարդ էք, որովհետև ձեր հրաւէրով ազգային կանոնական ամենակարևոր խնդրից վեր էք դասում և փախչում Հաշտարխան: Սրբ. տացու եպիսկոպոս!—Այդ իսկ յօդուածում Օրմանեան սրբազանն ասում է. «Հեռանալով Էջմիածնից՝ ես պահեցի իմ վրայ ս. Հովակիմի վանահօր պաշտօնը և նշանակել տուի արժ. Սահակ վրդ. Ամատունուն փոխանորդ վանահօր»: Սրբազան հայր, դուք ձեր նամակում գործ էք ածում մի քանի անգամ «Էջմիածին» փոխանակ ասելու «սուրբ Էջմիածին». դա հին դաս է, բայց այսօր էլ տարաբախտաբար հարկաւորւում է կրկնել. դա սերելը չէ և մեզ աշխարհականներս, ոչ միայն հոգևորականներս: Ցանկայ ինչ է նշանակում «ես պահեցի... և նշանակել տուի» խօսքերը: Դուք կարող էիք միայն խնդրել և ոչ նշանակել տալ:—Իսկ ինչ վերաբերում է Ատրպատականի թեմի առաջնորդի պաշտօնից հրաժարուելուն, մենք միայն մի բան զարմանում ենք, թէ ինչն ինչպէս լուսաւորուած ու զարգացած մի եպիսկոպոս ինչպէս կարող է իր դասաւորութիւնը ղեկել զանազան սաէ-կոպէ նեղ, պատուաւոր բամբասանքների վրայ: Ձեր նամակից այնքան պարզ է, որ դուք չկամեցաք Ատրպատական գնալ այս պատճառով, որ թեմը Հաշտարխանի թեմից աղքատ է *): Ցոյս կայ, որ դուք էլ Սեբաստիայ եպիսկոպոսից կանչեցէք. մինչ այս պզտակացութեան կարծիքը գալ Արիստակէս եպիսկոպոսի սաւակը կարդալուց յետոյ:

Սրանք գործը չէ, պ. Լէօ, հապա ինչ ես:

Հ. Մելեանը, հաւասարապէս և «Արարատ»-ը խմբագրութիւնը, ինչպէս երևում է պ. Լէօյի յօդուածից, կարծած են, որ Հաշտարխանի թեմական կոնսիստորիա լրագրական յայտարարութիւններով է քահանայացուները հրաւիրում թեմը համար: Պ. Լէօյը ասելով՝ «մի սրտացաւ առաջնորդի համար, որ գործով է ուզում ցոյց տալ իր սրտացաւութիւնը... դա մեղք չէ և չէ կարող լինել»: Անհասկանալի է մնում մի բան. ինչո՞ւ գեր. սրբազանը Մոզդոկի համար կարող էր քահանայ առաջարկել, իսկ իր թեմի համար չէ կարողանում առանց յայտարարութեան քահանայացուներ գտնել: Երբ յայտարարութեան է դիմում մի որ և է հեռաւոր գաւառի այդ հասկանալի է. բայց երբ այդ անում է մի թեմական կոնսիստորիա ունենալով Արիստակէս եպիս. պէս առաջնորդ,—այդ անհասկանալի է, որովհետև առաջնորդն ունի շատ հասարակ միջոց քահանայացուներ գտնելու: Բայց Արիստակէս սրբ. էժանագին նորութիւններով է կամենում անուն վաստակել. նրան անկլամ է հարկաւոր, ուրիշ ոչինչ: Եթէ նա գործով հետաքրքրւում լինէր, այնպէս շատ փախուստ չէր տալ Պետերբուրգից: Պ. Լէօյի վկայութեամբ, Հ. Մելեանն ասում է, թէ այդ միջոցով քահանաների ընտրութիւնն ընկնում է կոնսիստորիաների և առաջնորդների ձեռքը: Փաստը մնում է փաստ. պ. Լէօն երկար ու բարակ խօսում է այդ մասին և միայն հաստատում Հ. Մելեանի ասածը: Նա միայն բաւականանում է և մխիթարւում նրանով, որ Հաշտարխանի առաջնորդի վերաբերմամբ այդպիսի փաստ չկայ: Հ. Մելեանը իր խօսքը չէ մասնաւորել, այլ ընդհանուր կերպով ընդհանրացրել է: Մի կողմից Լէօն հերքել է առաջարկում. «կարելի էք ասել, որ քահանաների 9/10 մասը առաջնորդները չեն ընտրում». միւս կողմից ժողովրդի իրաւունքները պաշտպան հանդիսանալով նա շարունակում է. «աւելի լաւ չէ, որ այդ ընտրութեան ղեկավարողը լինի պատասխանատու, անշահասէր առաջնորդը»: Երբէք, հոգևորականները եկեղեցու իշխող հրեշտակներ չեն, նրանք նոյն հասարակութեան արդիւնք են, նոյն հասարակութեան անդամ են. կըզարգանայ, կըլուսաւորուի ժողովուրդը, կըլինին և լաւ հոգևորականներ. իսկ զանազան անիշխան պատճառների հիման վրայ ընտրութիւնների դէկն առնել ձգել առաջնորդների ձեռքը—նշանակում է բանաքարել ընտրողական սկզբունքը:

Անհասկանալի է մնում պ. Լէօյի և մի վարմունքը. մի կողմից, կարծես, թէ նա հետաքրքրւում է քահանայական հարցով, թէպէտ քաղաքական թերթը կրօն չունի, իսկ միւս կողմից հեգնում է եկեղեցու սուրբ հայրերին ասելով. «ինչ որ Բարսղի կանոններ», «ինչ Բարսեղները, Ոսկեբերանները որ և է քունջում խօսած կլինին և այս ձևի մասին»: Երկուսից մէկը—կամ քահանայական հարցով պէտք չէ հետաքրքրուել, կամ պատշաճաւորութեան սահմանից դուրս չէ պէտք գալ:

Պ. Լէօն վերջացնում է իր յօդուածը խիստ զառամծնով. «նա գրեց մի գիրք, որով խաչ գրեց իր գոյութեան վրայ»... Վերջացնենք և մենք մեր խօսքը բերելով նոյն մշակական աղանդի հրահանգից հետևեալ խօսքերը. «չարչարեսցուք, խաչեսցուք, թաղեսցուք զամենայն մարգիկ, որք ոչ են մերոյ աղանդի»...

Ե՞յ, Արիստակէսի դէմ հակառակ խօսողներ, զգոյշ եղէք, պ. Լէօն խաչեր շինելով է զբաղուած:

Մկրտիչ Բարխուդարեան

Բաքու

*) Գործից կնքեալ և վարչական մարդը: Խմբ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

«Մուրճ» ամսագիրը պախարակում է մեր «գաղափարազուրկ ինտելիգենցիային», որ նա չի մտածում առանձին գրքով հրատարակել Գրիգոր Արծրունու «բոցաւառ յօդուածները»։ «Այդ շատ բնորոշ մի փակտ է հայերիս համար,— ասում է «Մուրճ»-ը.— միակ մեծ (հայոց Մալուսեան, Լէօ Քալանթար...) հրապարակախօսի յօդուածները մոռացութեան են տրուած» («Մուրճ», №6, էջ 253)։

Միանգամայն արդարացի գանգատ, և մենք էլ «Մուրճ» ամսագրի հետ միասին ջերմ փափագող ենք, որ առանձին գրքով լոյս տեսնեն Գրիգոր Արծրունու հրապարակախօսական յօդուածներն անփոփոխ, մանաւանդ այն յօդուածները, որոնք վերաբերում են Ս. Էջմիածնին, «հայ-լուսաւորչական աղանդին», հայոց կաթողիկոսութեանը, հայոց ազգին, Թիւրքահայերին, Ամիրխանեանի ջատագովութեանը, Մխիթարեան հայրերին, վերջապէս հայոց դպրոցներին..., որովհետև, յիրաւի, «լոկ անունով նոր սերունդը ոչ մի գաղափար չի կարող կազմել Արծրունու մասին», ինչպէս շատ իրաւացի կերպով նկատում է «Մուրճ»-ը...

Տուէք, ի սէր Աստուծոյ, շուտով տուէք այդ յօդուածների ժողովածուն։ Դրանով թէ մոլորուածները միջոց կունենան աչք բանալու և թէ պատմագիրը նիւթ կունենայ իւր արդար դատավճիռը տալու, թէ որքան «մեծ» էր այն հրապարակախօսը, որի անունն այժմ չահագործւում է, թէ որքան խնլահաս է նա իւր խօսած նիւթերի մասին, որքան հեռատես և ինչ չափով նա ի նկատի է առել ժամանակը, հետևանքներն և այլն։

Հին Ընթերցող

Թիֆլիս, 20 յունիսի

ՄԵՐ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մեր պարբերական թերթերում անդադար գրւում է քահանաների տգիտութեան մասին. ջանքեր են թափւում վերացնելու վարձատրութեան ներկայ աւանդական ձևը և աւելի կանոնաւոր ու պատուաբեր վարձատրութեամբ՝ ռոճիկով հրապուրիչ դարձնելով քահանայական ասպարէզը, գրաւել դէպի այն ուսեալ անձանց։

Այդ մի այնպիսի կարևոր խնդիր է, որի համար դեռ երկար կըգրուի թէ և դէմ, մինչև որ նպատակիս կըհասնինք։ Կըհասնինք, բայց բաւական ուշ և մասամբ միայն, որովհետև մեր գիւղական ժողովուրդը իւր վերջին ծայր աղքատութեան մէջ հազիւ թէ կարողանայ մտածել այդ մասին և ընդունել մի նոր օրէնք, որից ոչ մի կոպէկի օգուտ չկայ իրեն, ըստ իւր համոզման։

Վարձատրութեան ներկայ ձևն ստիպում է քահանային ստորանալ, շողոքորթել, եսեմարկուել, իսկ գործակալների անվարձ պաշտօնը դրդել է տալիս աւելի ստոր ու անարգ միջոցների՝ գողութեան, կաշառակերութեան և բռնութեան։

Քահանայրին հանել իւր դրութիւնից դժուար է, որովհետև 60—100 ծուխ ունեցող աղքատ գիւղը հազիւ թէ կարողանայ կանոնաւոր ռոճկով ապահովել մէկի կեանքը, այն ինչ 10, 15 գիւղ, որի մէջ կարող են լինել 2000-ից աւելի ծուխ, կարող են վարձատրել գործակալի կատարած պաշտօնական ծառայութիւնները, որով իրաւունք կունենանք պահանջել գործակալից ճշտապահութիւն, ազնիւ գործ ու մաքուր հաշիւներ. այլապէս ինչպէս կարելի է մի մարդու յանձնել այնպիսի բարդ ու աշխատանք պահանջող գործ, որպիսին գործակալութիւնն է, և սպասել, որ նա առանց որևէ վարձատրութեան, տուն ու տեղ, ժողովուրդ ու պաշտօն թողած, քունը կտրած, գիշեր-ցերեկ, ամառ-ձմեռ սեպհական ձիով ու ծառայի ուղեկցութեամբ, անդադար վիճակը շըրջագայէ, բողոքներին բաւականութիւն տայ, անվերջ գրութիւններ գրէ, մաշէ իւր կեանքը։ Դրա համար պէտք է իդէալիստ լինել, թէև իդէալիստն էլ ուտելու հաց է հարկաւոր։ Դեռ չենք երկարացնում մանր-մունր, մսխալներով, կաթիլներով, հաւիկներով ու կոպէկներով հաւաքուող արդիւնքների դժուար ու ձանձրացուցիչ հաշիւները, որոնց լըրիւ լինելու համար գործակալը, միշտ խեթ ստանալով ի վերուստ, դառնում է խստապահանջ՝ լարելով իւր դէմ ստորադրեալ քահանաներին, երէցփոխներին ու խառնիճաղանճ ամբոխը...

Բողոք բողոքի յետևից թափւում են կոնսիստորիաները, քննութիւն քննութեանց յետևից շարունակւում. «գողութիւն է կատարուել» աղաղակում են ամեն կողմից և սև եզան գլխին հաւաքւում հազարաւոր դանակաւոր։ Բանից ինչ է դուրս գալիս մ՞յն՝ որ գործակալը հազիւ վարձատրուել է այնքանով, որքան արժէ իւր կրած միմիայն ֆիզիքական նեղութիւնների մի տասներորդ մասը։ Որքան էլ քիչ լինի այդ վարձատրութիւնը—համարւում է գողութիւն և որքան բարեխիղճ եղած լինի գործակալը—անուանւում է գող. և դրա միակ պատճառը՝ տիրող անկանոնութիւնն է, որին վաղուց պիտի վերջ տուած լինէր մեր հոգևոր իշխանութիւնը, և ի հարկէ լաւ է ուշ, քան ոչ երբէք։

Եթէ մօտ առեն, թէ իւրաքանչիւր ձեռնհաս քահանայ պարտաւոր է իւր հերթին ձրի ծառայել ս. Աթոռին, որպէս ամեն կարող գիւղացի պարտաւոր է տանուտէրի, դատաւորի և այլ պաշտօններով ծառայել հասարակութեանը, մենք կըպատասխանենք, որ գործակալութիւնն ու գիւղական պաշտօնավարութիւնը շատ հեռու են իրար նման լինելուց, որովհետև գիւղական պաշտօնեաներն ընտրւում են ժողովրդից երեք տարով, իսկ գործակալը նշանակւում է իշխանութիւնից և մնում է իւր պաշտօնում երբեմն 10—15 տարի։ Ո՞վ կարող է երաշխաւորել, որ նա այդքան տարի, առանց իդէալիստ լինելու, անվարձ քաշքշելու անխոնջութիւնը կունենայ։

Գիւղական պաշտօնեային չի կարելի այնքան մեղադրել կաշառակերութեան համար, որքան հոգևոր հօրը՝ գործակալին, ուստի ակամայ մեղքի մէջ ընկնելուց պիտի ազատել նրան՝ վարձատրելով գոնէ մասամբ այս թէ, խիստ կոնտրոլի միջոցով ճշտապահութիւն ու հաւատարմութիւն պահանջել *)։

Գործակալի ռոճկի աղբիւրը շատ հեշտ է գտնել, բաւական է որ կամք լինի, և կանհետանան դժուարութիւնները։ Նախ միջանկեալ ասենք, որ ինչ նրանց ձեռքն է անցնում գողութեան ճանապարհով, կարելի է թոյլատրել և յայտնապէս ստանալու, և կը վերջանայ հարցը։ Աւելի հիմնաւոր ու պարզ կը լինի, եթէ իւրաքանչիւր պսակից համար նրան մի ռուբլի, հոգեբաժնից հաւ 20 կոպ., սրանով կը լրանայ ռոճկի կէսը, իսկ հարցը միանգամայն լուծելու համար մատնացոյց ենք անում ուխտատեղիները։ Կան ուխտատեղիներ, որոնք տալիս են տարեկան 100-ից մինչև 1000 ռուբլի եկամուտ, բայց բացակայող լուրջ միջոցների ու կարգերի պատճառով կապալառուն կամ դարձեալ գործակալը կոնսիստորին, ըստ պայմանի, տալիս են 100 կամ 200 ռուբլի։ Այս դէպքում գործակալը, կը նշանակի, նորից ամէն է ունենում գողութեամբ ձեռք բերելու իւր նեղութեան վարձը։ Ես համոզուած եմ, որ կապալառուներից եթէ կըկնապատիկը պահանջուի, նրանք դարձեալ պօզ չեն գալ իրենց ստացած սրբավայրից, և հա պատրաստ է ոչ միայն կարգին գործակալների ռոճկը, այլև ուխտատեղիների նորոգութեան ու բարեկարգութեան ծախսը. աւելին թող նորից գնայ այնտեղ, ուր գնում է այժմ։

Այս առթիւ արժէ շօշափել մի խնդիր ես՝ դա գործակալների համար գոնէ մի օգնական ունենալու խնդիրն է, որը կարևորութիւն կը ստանայ, երբ ի նկատի ունենանք հետևեալը։

Գործակալը կառավարում է ամբողջ կէս գաւառ, որի հեռաւոր ծայրերը հասնում են նոյն իսկ 100 վերստի, և այդքան տարածութեան կառավարութեան համար նա ոչ միայն օգնական չունի, այլ և անձնահաս է մի գրագիր պահելու. աւելացրէք սրա վրայ և այն, որ նա քահանայ է, ծխատէր է, պարտիք ունի վճարելու իւր հոգևոր հօտին։

50 վերստ հեռաւորութեամբ մի գիւղից մէկը գալիս է գործակալից պսակի հրաման ստանալու. գործակալը կամ հիւանդ է, կամ տանը չէ.—գործով վիճակ է դուրս եկել, կամ արդիւնքները կոնսիստոր է տարել, վերադառնալու է 4 օրից յետոյ, այն ինչ պսակը լինելու է 2 կամ 3 օրից յետոյ։ Պսակաւորն այդքան ճանապարհ կտրելուց յետոյ դատարկաձեռն չէ ուզում վերադառնալ։ Երրորդ օրը մի մարդ էլ սրա յետևից է գալիս, իսկ չորրորդ օրը գործակալը չի վերադառնում... քահանաներն էլ արգելուած է անհրաժեշտ պսակ կատարելը։ Այս դժուարութիւնից ժողովրդին ազատելու համար պէտք է որոշել, որ ընդունակ քահանայք հերթով և ձրի օգնականութիւն անեն գործակալին և անյետաձգելի գործեր կատարեն գոնէ գործակալի բացակայութեան ժամանակ։

Զաքարիա քահ. Ալբեսեան

Ղազախ, 16 յուլիսի

*) Եթէ պաշտօնեան գող ու կաշառակեր է, նրան ուղղել չի կարելի ռոճիկ նշանակելով. շատ պաշտօնեաներ կան, որոնք փառաւոր ռոճիկ ստանալով հանդերձ փառաւոր էլ կաշառքներ են անուշ անում։ Խմբ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

(«Նոր-Դար»-ի թղթակցից)

ԹԱՒՐԻԶ, 12 յունիսի.—Որքան որ չենք ուզում հրապարակ հանել այն ամօթալի երևոյթները, որոնք օր ցերեկով կատարւում են մեր շուրջը, որքան անուշադիր ենք թողնում մի կարգ մարդկանց կատարած տարօրինակ սխրագործութիւնները, ենթադրելով որ, վերջապէս, այդ մարդիկ կամաչեն և յետ կըկանգնեն քանդելու սկզբունքից, կը հասկանան իրենց սխալը,—սակայն և այնպէս տեսնում ենք, որ լռելով էլ բան չի դառնում. մեր ազգային հաստատութիւնները խաղալիք են դարձել երեխաների և տղայամիտների ձեռքում, իսկ զանազան անհատներ, օգտուելով հանգամանքից, չահագործում են ինչ որ սուրբ է մեզ համար և դեռ ես լրագրութեան միջոցով էլ բուն իրողութիւնը յեղաշրջում են և խաբում միամիտ հասարակութեան, որն կքաղուած լինելով հացի խնդրով լռութեան է տալիս ամեն ինչ։ Մեր պապերը, ամեն զրկանքներ կրելով, ուսման տաճարներ կառուցին մեզ համար, սակայն մենք անարժան թոռներս, որ միշտ անուանարկում ենք մեր պապերին, այսօր նրանց չինած վեհ հաստատութիւնները քանդում ենք։ Շուտով կաթոլիկ միսիօնարութիւնը կըձեռնարկի Թաւրիզում մեծ ուսումնարան կանգնեցնելու, թէ ինչ նպատակով — հասկանալի է։ Ամեն մի հեռատես հայ հասկացել է եզուիտների գործողութիւնների նպատակը և գիտէ, թէ որպիսի կեղծ հայասիրութիւն է տիրում նրանց մէջ։ Բայց գիտէք ինչ են ուզում անել մերոնք. փոխանակ հիմնելու տարրական առաջ ծրագրուած կեդրոնական դպրոցը, եղածներն էլ ուզում են փակել և այն էլ ընդմիշտ, և, որպէս ապացոյց ասածիս, առաջ բերեմ փաստը։

Լիլաւա թաղի երկսեռ դպրոցների հոգաբարձութեան պաշտօնավարութեան ժամանակամիջոցը լրացած լինելով, հոգաբարձութիւնը՝ նոյն դպրոցների տարեկան հանդէսի վերջում յայտարարեց ժողովել թաղի հասարակութեանը, որ հասարակութիւնն այլ ևս իրենց չընտրի հոգաբարձու, որովհետև յոգնել ու զզուել են այդ պաշտօնից։ Ի հարկէ դպրոցներն առանց հոգաբարձուի չպիտի մնային. առաջնորդական տեղապահ քահանայի յայտարարութեան համաձայն, ամսիս 9-ին յիշեալ թաղի թատերասրահում ժողով կայացաւ ընտրելու նոր հոգաբարձութիւն։ Ես պատահմամբ միայն ներկայ եղայ այդ ժողովին. անցնում էի փողոցով, լսում եմ ահագին աղմուկի ձայներ. սկզբում կարծեցի, որ պարսիկների սգի օրեր լինելով, ըստ իրենց սովորութեան, վայնասունով սուգ են կատարում, սակայն մօտիկ կանգնած տղաները հասկացրին, որ հոգաբարձական ընտրութիւն է կատարւում թատերասրահում։ Քայլերս ուղղեցի ժողովատեղին։ Ի՞նչ եմ տեսնում. մօտ 500 տուն ունեցող թաղը հոգաբարձու է ընտրում մօտ 50 հոգով, և գիտէք ովքեր են այդ ընտրողները. չըջահասում մեծամասնութիւն կազմողները—18 տարեկան երեխաներ, չալվադարներ և... մի քանի շնորքով մարդիկ, որոնք, կարծէք, ամաչում էին իրենց գալու համար։ Կարճ թէր և դէմ վիճաբանութիւնից յետոյ, կամ, աւելի ճիշտը, մեծերը հասցէին հայհոյանքներ տեղալուց յետոյ, մէկ էլ լսեցի մի վայրենի աղաղակ և ծափահարութիւն, որ աւելի նման էր մահմեդականների սալաւաթին, որ գործ են ածում զուռնի և ոգևորութեան ժամանակ։ Դիրքաց թատերասրահը աթոռները, խառնուեցին իրար, փայտ, բռունցք, հայհոյանք, վայնասուն... ոչ ոք չգիտէր ով ում հետ գործ ունէր. տուրուդմփոցը կատարեալ էր։ Պարսիկներն սգիս որքան պատահում է, որ երկու խմբակների միջև կռիւ է պատահում փողոցում, շատ անգամ սպանւում են այս կամ այն խմբի անդամներից։ Ուզում եմ ասել, որ հոգաբարձու ընտրողները իրենց վայրենութեամբ, չէին զանազանւում կատաղած պարսիկներից։ Մեր բազմաթիւ կենդանի հաստատութիւնները մինչև այժմ չկարողացան կրթել մեր հասարակութեանը. պարսկական բնաւորութիւնը բուն է դրել մեր մէջ։

Վերադառնալով տուն, մտածում եմ. որքան ընդունակ է հայը հային ջարդելու, քանդելու, կործանելու գործում և որքան գլուխ քարշ է գցում մի օրինակելի հասարակ պարսիկ փէշքաշի առաջ։ Եթէ մեր սերբին կամքս այսպէս ընթանայ, մեր դպրոցները շուտով կըփակուին. և ո՞վ է պատճառ այս բոլորի, եթէ ոչ էլի մի կարգ մարդիկ։

Սահակ ապ. Այվազեանը հեռացաւ, հասարակութիւնը բարոյապէս յաղթեց նրան, բայց եկեղեցու այդ պաշտօնեան այսպիսի մի խռովութիւն սերմանեց մեր հասարակութեան մէջ, որը վերացնելու համար տարիներ են հարկաւոր. եթէ այսօր Թաւրիզի հայերը լարուած են իրար դէմ, մեղաւորը Սահակ եպիսկոպոսն է, որը գործեց դառնալով զանազան անհատների ձեռքում ինչ որ սուրբ էր սասանելու դէմ։ Հոգաբարձական ընտրութեան ժամանակ տեղի ունեցող կռիւը՝ պատգամաւորական ընտրութիւնների ժամանակ տեղի ունեցող խռովութիւնների շարունակութիւնն է, որ էլի կըշարունակուի։

Պալունի

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԹԻՒՐՔԻԱ

«Петербургск.Вѣд.» ի Կ. Պոլսի թղթակիցը հաղորդում է, որ Կրետէի մահմեդականները մի պատգամաւորութիւն են ուղարկել Կ. Պոլիս բողոքելու համար կղզու քրիստոնեայ բնակիչների այն դիտաւորութեան դէմ, որով այս վերջիններս ուզում են Կրետէն միացնել Յունաստանի հետ։ Դեռ ևս չի լռեցել Աբդուլ-Համիդի հպատակների այն թափած վէճը,—ասում է թղթակիցը,—որ հասցրին նրանց բարձրագոյն կամքառի պաշտօնում յոյն արքայազնի նշանակուելը։ Կ. Պոլսում դեռ չի խլացել սուլթանական կառավարութեան վարմունքը դատապարտող այն տրտունջը, որ լսւում էր Թուրք հասարակութեան ամեն խաւերում, մանաւանդ հոգևորականութեան մէջ։ Եւլդը-Քէօշկն ստիպուած էր մեծ ջանք գործ դնել, շատ ոսկի ծախսել կաշառելու համար հոգևորականութեանը, պարտաւորուել էր ժողովրդին հաւատացնել, թէ յոյն արքայազնի նշանակուելը և կղզուց զօրքերի հեռանալը ժամանակաւոր գործեր են և թէ Կրետէն մնալու է Թիւրքիայի հզօրի թւում... Ասել այժմ Թուրքերին, թէ Կրետէն միացած է Յունաստանի հետ—նշանակում է բոլորովին կոտրել փադիշահի հեղինակութիւնը, որը իւր կառավարութեան օրով, կորցնելով իւր տիրապետութիւնների գրեթէ կէսը, առանց այն էլ փառաւոր յաղթողի հրաշակ չի վայելում Թուրք ֆանատիկոսների մէջ, որոնց շարիաթն ասում է, թէ «խալիֆը քաջ պիտի լինի առիւծի նման»։ Ոչ մի տարակոյս չկայ,—շարունակում է թղթակիցը,—որ Կրետէի միացումը Յունաստանի հետ մեծ խռովութիւն կըյարուցանի Թիւրքիայում, և այդ բանից չի կարող չսարսափել սուլթանի կառավարութիւնը, որը հասկացել է բնակչութեան ոչ թէ միայն համբերութիւնը, այլ և կենսական հիւթերը։ Կառավարութեան շատ լաւ յայտնի է ամբողջ այդ տրամադրութիւնը և, ինքն ըստ ինքեան հասկանալի է, սուլթանն ամենևին չի ցանկանալ Կրետէն պարգևել Յունաստանին։ «Թիւրքիան,—ասում է թղթակիցը,—աւելի շուտ կըհամաձայնի Կրետէն անկախ իշխանութիւն դարձնելու, քան թէ յունաց թագաւորութեան մի գաւառ։ Բայց այսպիսի մի քայլ յամենայն դէպս անպարելի է ներկայումս. թէկուզ հենց միայն նրա համար, որ Կրետէի անկախութիւնը զօրեղ խլրտում կըձգի Մակեդոնիայում, Հայաստանում և առհասարակ ոչ ցանկալի և, որ գլխաւորն է, անժամանակայարմար շատ բարդութիւններ կառաջացնէ Բալկանեան թերակղզում... Այսպիսով այն ճանապարհը, որ ընտրել է Կրետէի պատգամաւորների ժողովը և առաջարկում է Եւրոպային Կրետէի խնդիրը վերջնականապէս լուծելու համար, անվտանգ չէ,—որովհետև երազել, թէ Թիւրքիան առանց որևէ բողոքի և պայքարի զոհերի կըհամաձայնի Կրետէն Յունաստանի հետ միացնելուն—նշանակում է երազել անկարելի և անհաւանական մի բանի մասին»։

ԱՆԳԼԻԱ

Բուէր կանանց և երեխաների անգլիական բանակներում վատ պայմանների մէջ պահուելուն վերաբերեալ տիկ. Հոբհաուզի մեզ ծանօթ մերկացումները բուռն յուզում յարուցին պատգամաւորների ժողովում։ Պատգամաւոր Սկոտ հարցում ուղղեց զինուորական մինիստր Բրոդրիկին, թէ ինչ միջոցներ է ձեռք առել նա կատարելու համար իւր արած խոստումը, այն է՝ ազատ արձակել առանձին բանակներում պահուող բուէր կանանց և երեխաներին։

Բրոդրիկ.—Ես աւելացնելու ոչինչ չունիմ այն բանին, ինչ որ ասել եմ այս առթիւ։

Դիլլոն (իռլանդիացի).—Մինիստրը չի՞ յիշում արդեօք, թէ ինչպէս մի ամիս ու կէս առաջ նա ասաց ինձ, որ այդ բանակներից իւրաքանչիւրի մէջ բանտուածներն ազատ են անելու ինչ որ կամենան—հեռանալ թէ մնալ (ծափեր իռլանդացիների նստարանների վրայ)։

Որովհետև Բրոդրիկը չի ուզում պատասխանել, իռլանդացիներն աղաղակում են «Պատասխանեցէք, պատասխանեցէք»։

Նախագահն ի կարգ է հրաւիրում։

Դիլլոն.—Սրանից երկու ամիս առաջ մինիստրն յայտարարեց ինձ այս ժողովում, որ բանակում բանտուածներից ամեն ոք կարող է հեռանալ, եթէ կամենում է։

Բրոդրիկ.—Այդպիսի բան ես չեմ ասել։ Որքան յիշում եմ, Կապի գաղութի մի բանակի մասին միայն ասել եմ, թէ

ամեն ոք կարող է հեռանալ այնտեղից:

Դիլլոն.—Հրաւիրում եմ ժողովի ուշադրութիւնը, որ յարգելի մինիստրի ասածը ճիշտ չէ։ (Աղաղակներ մինիստրական կուսակցութեան նստարանների վրայ և ծափեր իռլանդացիների նստարաններին վրայ)։ Գ. մինիստրն ասաց ինձ, որ բանակներում գտնուողներին ամենքին իրաւունք է տրւում հեռանալու, եթէ այդ ցանկալի է նրանց։

Բրոդրիկ.—Այս բանին կարող եմ պատասխանել, որ հարցմունքն ինձ տրուեց ուրիշ զանազան հարցմունքի թւում, և ես կարող էի պատասխան տալ տեղին ու ժամանակին յարմար։

Այս խօսքերը մեծ զայրոյթ յարուցին գիմադիր կուսակցութեան ժամալի մէջ։ Առաջ բերեցին Բրոդրիկի փետրուարի 25-ին պատգամաւորների ժողովում ասած խօսքերը, և բանից երևաց, որ նա ասել է ճիշտ այն, ինչ որ ասած Դիլլոնը։ Ազատական լրագրները Բրոդրիկին ստախօս են անուանում, որովհետև այն ժամանակ ալդէն, երբ նա յայտարարում էր թէ բոէր կանայք և երեխաները կարող են ազատօրէն հեռանալ բանակներից, գիտէր, թէ ինչ ծանր դրութեան մէջ են գտնւում այդ կանայք ու երեխաները։ «Daily News»-ն այս առթիւ բացականչում է. «Երբէք երկիրն այնպէս դիտմամբ խաբուած չի եղել, ինչպէս այժմ»։

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Նեւ-Եօրկից հեռագրում են յունիսի 20-ից. «Այսօր ամենատաք օրն է, որպիսին երբևիցէ նկատուել է Մանխատանում և Բրուկլինում։ Կէս գիշերի և կէսօրուայ ժամը 3-ի միջև արևահարութիւնից մահուան 62 դէպք պատահեց։ Շատ գործարաններ դադարեցրել են աշխատանքները և շատ խանութներ փակուած են։ Բոլոր հիւանդանոցները լիքն են։ Մօտ 19,000 հոգի անցած գիշեր անցկացրին բացօդեայ։ Որքան մինչև այժմ յայտնի է, անցած 24 ժամուայ ընթացքում եղել է մահուան 25 դէպք Փիլադելփիայում և 40 դէպք Պիտսբուրգում։»

—Սիկկիմի իշխանութեան սահմանից ստացուած տեղեկութիւնների համաձայն, Տիբեթում ափիշների միջոցով հրատարակուած է կայսրի և այրի կայսրուհու ստորագրած մի հրաման, որի մէջ յայտարարւում է, թէ պետութիւնները յաղթութիւններ են տարել հիւսիսային Չինաստանում. այնուհետև հրամայւում է պահպանել միլիօնատէրերի և քրիստոնեայ մկրտուած չինացիների կեանքը։

—Ցետինէից հեռագրում են, որ Դուսինի գաւառի քրիստոնեաների վիճակը շատ վտանգաւոր է։ Ասում են, որ թուրքերը գրաւել են Բրեզովիցի գիւղը, սրտաքսելով քրիստոնեայ բոլոր բնակիչներին, դրանց թւում կանանց և երեխաներին։ Արտաքսուածներից մեծ մասն անցել է սահմանից Չերնոգորիա։

— Ինչպէս հեռագրում են Կապշտադից, բոէր զօրավար Փուշէն, որը ներս էր խուժել Կապի գաղութը, նահանջ է տալիս դէպի Դրակօնեան լեռները։ Անգլիական զօրքերը հետամուտ են լինում նրան, բայց որովհետև առաջը համեմատաբար բաց տեղ է գտնւում, ապա հազիւ թէ աջողուի նրան գերի բռնել։

— Յունիսի 26 ին Լոնդոնում գումարուելու է ազատամիտ կուսակցութեան ժողով։ Կառաջարկուի վստահութիւն յայտնել Կեմպբել-Բաններմանին։

—Կրիւգերը յունիսի 20 ի առաւօտեան մեկնեց Կապեն, Գիլբերսում վերադառնալու համար։

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(1901 թ. մայիսի 6-ից)

(Ժամերը նշանակւում են Պետերբուրգի ժամանակը, փակագծերի մէջ—Թիֆլիսի ժամանակը)

Արագընթաց գնացքը № 2 Թիֆլիսից Բագու մեկնում է (շաբաթը մի անգամ, հինգշաբթի օրերը) 9 ժ. 17 ր. (10 ժ. 15 ր.) առ., հասնում է Բագու 10 ժ. 40 ր. (11 ժամ 38 ր.) եր.։

Արագընթաց գնացքը № 1 Բագուից Թիֆլիս մեկնում է հինգշաբթի օրերը 5 ժ. 20 ր. (6 ժ. 18 ր.) առ., Թիֆլիս հասնում է 7 ժ. 25 ր. (8 ժ. 23 ր.) եր.։

Արագընթաց գնացքը № 1 Թիֆլիսից Բաթում մեկնում է 9 ժ. 11 ր. (10 ժ. 9 ր.) առ., հասնում է Բաթում 7 ժ. 58 ր. (8 ժ. 56 ր.) եր.։

Արագընթաց գնացքը № 2 Բաթումից Թիֆլիս մեկնում է 9 ժ. 45 ր. (10 ժ. 43 ր.) եր., հասնում է Թիֆլիս 7 ժ. 57 ր (8 ժ. 55 ր.) առ.։

Պոստային գնացք № 3 Բագուից Թիֆլիս մեկնում է 10 ժ. 15 ր. (11 ժ. 13 ր.) եր., Թիֆլիս հասնում է 4 ժ. 13 ր. (5 ժ. 11 ր.) ցերեկուայ. Թիֆլիսից Բաթում մեկնում է 5 ժ. 27 ր. (6 ժ. 25 ր.) եր., Բաթում հասնում է 6 ժ. 30 ր. (7 ժ. 28 ր.) առ.։

Մարդատար գնացքը № 5 Բագուից Թիֆլիս մեկնում է 12 ժ. 27 ր. (1 ժ. 25 ր.) ցերեկուայ, Թիֆլիս հասնում է 5 ժ. 51 ր. (6 ժ. 49 ր) առաւօտեան. Թիֆլիսից Բաթում մեկնում է 6 ժ. 49 ր. (7 ժ. 47 ր) առ., Բաթում հասնում է 6 ժ. 48 ր. (7 ժ. 66 ր.) եր.։

Պոստային գնացքը № 4 Բաթումից Թիֆլիս մեկնում է 10 ժ. 17 ր (11 ժ. 15 ր.) եր., Թիֆլիս է հասնում 10 ժ. 40 ր. (11 ժ. 38 ր.) առաւօտեան. Թիֆլիսից Բագու մեկնում է 11 ժ. 48 ր. (12 ժ. 46 ր.) ցերեկուայ, հասնում է Բագու 5 ժ. 40 ր. (6 ժ. 38 ր.) առ.։

Մարդատար գնացքը № 6 Բաթումից Թիֆլիս մեկնում է 8 ժ. 15 ր. (9 ժ. 13 ր.) առ., հասնում է Թիֆլիս 7 ժ. 38 ր. (8 ժ. 36 ր.) երեկոյեան. Թիֆլիսից Բագու մեկնում է 8 ժ. 18 ր. (9 ժ. 16 ր) եր., Բագու հասնում է 12 ժ. 40 ր. (1 ժ. 38 ր.) ցերեկուայ։

Պոստային գնացքը Թիֆլիսից Կարս մեկնում է 10 ժ. (10 ժ. 58 ր.) եր., հասնում է Սանահին 2 ժ. 56 ր. (3 ժ. 54 ր.), Ղարաքիլիսա—5 ժ. 4 ր (6 ժ. 2 ր.) առ., Ալէքսանդրապոլ—8 ժ. 37 ր. (9 ժ. 35 ր.) առ., Կարս—12 ժ. 23 ր. (1 ժ. 21 ր.) ցերեկուայ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(M) 90582 52—37

ՀՐԱՒԷՐ

Այսու յալ գրաբար հրաւիրւում է Թիֆլիսի Վանաց աւագ եկեղեցու միաբան Տէր-Եզնիկ աւագ քահանայ Երզնկեանցի ծխական ժողովուրդը յիշեալ եկեղեցին, ամսիս 24ին առաջիկայ կիրակի օրը, 12 ժամին, պաղտնի քուէարկութեամբ ընտրելու Սուրէն Երզնկեանցին յիշեալ եկեղեցուն սպասաւորելու համար։

Գործակալ ա. մ. եկ. հայոց Թիֆլիսի՝ Զաքարիա քահանայ Զարդեղեանց։

(662) 1—1

ՁՐԻ !!!

8 րուբլի արժեցող ձրի ժամացոյց երաշխաւորութեամբ, որը նուաղում է երկու պիէս, կամ արդուզարդի հայելի ժամացոյցով։ Ով ուզում է ստանալ երաշխաւորութիւն ունեցող սեղանի ժամացոյցը, թող նա ուղարկէ 1 ր., և նրան կուղարկուի երաշխաւորութիւն ունեցող ժամացոյցը կամ երաշխաւորութիւն ունեցող արդուզարդի հայելին մնացած 7 րուբլու վերադիր վճարով։ Ժամացոյցի հետ միասին նրան կուղարկուի ձրիաբար 8 կուպոն իւրաքանչիւրը 1 ր. արժողութեամբ։ Այդ կուպոնները հեշտութեամբ կարելի է վաճառել ծանօթների շրջանում և այդպիսով յետ ստանալ ժամացոյցի համար ծախսուած փողը։ Այդպիսի կուպոն գնողը և նոյն կուպոնը մեր պահեստն ուղարկողն իւր կողմից իրաւունք ունի մեզնից ստանալու երաշխաւորութիւն ունեցող սեղանի ժամացոյց կամ արդուզարդի հայելի 8 րուբլի արժողութեամբ միմիայն 7 րուբլու վերադիր վճարով և ձրի 8 կուպոն իւրաքանչիւրը 1 րուբլի արժողութեամբ նորից տարածելու համար։ Դիմեցէք՝ «Базаръ Новостей», Варшава, Граничная, 4. (Նամակները գրել ռուսերէն)։ (M.) № 67755. 5—5

ՍԱՆԱՏՈԳԵՆ

ԱՄՐԱՊՆԴՈՂ ԴԵՂ,

ՈՐ ԲԺԻՇԿՆԵՐԸ ՋԵՐՄԱԳԻՆՍ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ԵՆ

Գործածել իբրև սննդարար միջոց ստամոքսի և աղիքների ցաւի ժամանակ, երեխանց սննդառութեան խանգարման ժամանակ, ուժասպառ հիւանդութիւններից առողջանալիս, և իբրև սնունդ ստացնող միջոց ծիծ տուող մայրերի համար։ Այս բանը

ՓԱՍՏԱՒՈՐԱԳԷՍ

Հաստատել են գիտնական մանրամասն հետազօտութիւններով պրոֆ. v. BERGMANN, EULENBURG, TOBOLD Բերլինի համալսարանի կլինիկներում, պրոֆ. v. SCHRÖTTER Վիեննայի համալսարանի ներքին հիւանդութիւնների կլինիկի III բաժանմունքում պրոֆ. v. FRUHWALD Վիեննայի մօտ գտնուած երեխանց բուժարանում են. են.

Պատրաստում է BAUER & Cie ֆիրման, Բերլին. O S. 16.

Վաճառւում է դեղատն. դեղատնային խանութն. և դրոգիստների մօտ

Իսկականը միայն ռուսական փաթեթի մէջ եղածն է։

Н.НИКОЛЬСКIЙ

(M) 61422. 10—10

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

այսու յայտարարում է, որ իւր ատեանում օրուայ ժամը 1-ին, յունիսի 27-ին, նշանակուած է աճուրդ կարգի բերելու և քարելու Օրլովեան փողոցը, նոյնպէս և շինելու նոյն փողոցում նեցուկի պատ՝ 3,255 րուբլի 35 կ. գումարով։ Աճուրդին մասնակցել կամեցողները կարող են տեղեկանալ պայմաններին վարչութեան շինարարական բաժնում բոլոր լի օրերին առաւօտեան ժամը 9-ից մինչև օրուայ ժամը 2-ը։

(663) 3—1.



ՍՐԻՊՈՂԱԿԱՆ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆ

Մենք իմացել ենք, որ մի քանի ֆիրմաներ Ռուսիայում «Օդոլ» անուան տակ ծախում են ատամի դեղեր, որոնք ոչ մի առնչութիւն չունին Օդոլի հետ։

Մենք վճռապէս յայտարարում ենք, որ մեր Օդոլը խարդախողները կը պատժուին օրինական կարգով և նախազգուշացնում ենք հասարակութեանը, որ այդպիսի խարդախած Օդոլ չգնի։ Մեր իսկական Օդոլը վաճառւում է բացառապէս մեր արտօնեալ կաթեցնող սրուակներով, որի վրայ խնդրում ենք առանձին ուշադրութիւն դարձնել։

ԴՐԵԶԴԵՆԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ
ԼԻՆԳԵՐԻ

(M)403 1—1

ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ

վաճառւում են հետևեալ գրքերը

«Գրպանի ատլաս, աշխարհագնդի մակարդակով», Էփրիկեանի գինն է.	1 ր. 75 կ.
«Էվէլինա», Գրիգոր Արծրունու	— » 50 »
» » » ռուսերէն	— » 70 »
«Թիւրքահայոց տնտեսական դրութիւնը», Գրիգոր Արծրունու . .	— » 30 »
«Պատրիկեանի Նամակները». Ա. Քալանթարի . . .	— » 60 »
«Կեանքի գծեր» » »	— » 30 »
«Բանաստեղծութիւններ», Ղ. Աղայեանի . . .	1 » 50 »
«Արութին և Մանուէլ» » » . . .	1 » 60 »
«Ալմաստ», վէպ, Աստուածատր. . . .	2 » — »
«Զարմանալի որդ», թարգ. Ն. Ղուլիջանեանի . . .	— » 10 »
«Բանաստեղծութիւններ», Պ. Դուրեանի . . .	— » 20 »
«Զէյթունի ներկան և անցեալը». . . .	1 » 50 »
«Ընտիր Հայկազունք»	2 » 50 »
«Բանաստեղծութիւններ և արձակ գրուածքներ» Ռ. Պատկանեանի	3 » — »
«Ազատութեան սարին», թարգմ. Ա. Կ. . . .	1 » 20 »
«Պապիկ և թոռնիկ», Խրիմեան Հայրիկի . .	— » 60 »
«Հայոց պատմութիւն» (պատկերազարդ) Ց. Ճաղարբէգեանի .	— » 40 »
«Քաօս», վէպ, Շիրվանզադէի . . .	1 » 50 »
«Միքանիա» »	— » 50 »
«Սուրիծաձև Մհեր», Գ. Բալասեանի	— » 25 »
«Բարոյական աւածներ», Բուրխուդարեանի . . .	— » 20 »
«Բազմավէպ»ի 1901 թ. բաժանորդագրութիւն . .	4 » — »
«Վտակ ժողովածուի» » . . .	1 » — »

Գումարով գնողներին զիջումով

Դիմել՝ Тифлисъ Книжный магазинъ «Гуттенбергъ» (Лорисъ Меликовская улица, № 11) Галусту Галустяну.

Նոյն տեղից կարելի է ձեռք բերել Նոր լոյս տեսած և այլ ամեն տեսակ գրքեր։

(656) 1—1

ՆՊԱՍՏՈՒՄ Է ՄԱՐՍՈՂՈՒԹԵԱՆԸ
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՄԻՋՈՑ

ԳՈՒՄՄԻ-ՊԵՊՍԻՆ

ԴԵՂԱԳՈՐԾ Ի. ՊՈՂՈՍՍԿՈՒ Gummi-Pepsin

ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

Համեղ կենդաբար կոնֆետներ, մաքենաբար մաքրում են ատամները, հականեխում և հաճելի հոտ են տալիս բերանի խոռչին և լնդերքին։ Գումմի-Պեպսինը գործածելիս նուազում է ծխախոտ ծխելու ցանկութիւնը։ Իւրաքանչիւր շերտ-կոնֆետ պարունակում է ամենալաւ Պեպսին և «Գումմի», որը հաճելի է և անվերջ ծամւում է։

ԳԻՆՆ Է 30 ԿՈՊ.

Վաճառւում է դեղատներում և դեղատնային խանութներում

Պահեստը՝ СПБ. Вас. Остр., 4 лин., д. 39.

Վաճառւում է՝ Южно Русское О-во апт. тов. և ուրիշների մօտ։ (M.) 35710 16—7